ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հունիսի չորեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

86
(2936)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԴԱԴԱՐԵԼ Է ԳՈՐԾԵԼ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՂԲՈՐ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Երկար տարիներ ՀՀ-ում գործող Վալերի Քոչարյանի անվան բարեգործական հիմնադրամը 2023 թվականի ընթացքում ունեցել է զրո դրամի շարժ, այն է՝ չի գործել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվեց «Վալերի Քոչարյան» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ եւ Վալերի Քոչարյանի դուստր Իրինա Քոչարյանի հետ, որը հաստատեց Հիմնադրամի չգործելու փաստը:

«Հիմնադրամը գոյություն է ունեցել ավելի քան 20 տարի եւ հիմնադրվել է իմ կողմից՝ հորս մահից հետո: Հիմնադրամը գործել է անձնական միջոցներից՝ առանց այլ հիմնադրամների կամ կազմակերպությունների ներգրավման: Վերջին տարիներին առողջությունս խիստ վատացել է, ինչն ազդել է թե՛ կյանքիս որակի վրա, թե՛ համապատասխանաբար՝ աշխատանքիս վրա: Այդ իսկ պատճառով ես ստիպված էի սառեցնել հիմնադրամի գործունեությունը», - «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասաց Իրինա Քոչարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել էր նաեւ, որ փակվել է Իրինա Քոչարյանին պատկանող «Գալաթեա» բժշկական կենտրոնի գործունեությունը, ինչին ի պատասխան՝ Իրինա Քոչարյանը կրկին հաստատող պատասխան տվեց:

«Հիմա չի գործում, հուսով եմ՝ ժամանակավորապես:»

ՀՀ արդարադատության փոխնախարար Կարեն Կարապետյանը պաշտոնի նշանակվել է 2023 թվականի փետրվարի 22-ին: Մինչեւ փոխնախարարի պաշտոնը զբաղեցնելը Կարապետյանը 2017-2018 թվականներին եղել է Եվրոպայի խորհրդի՝ «Աջակցություն Հայաստանում դատաիրավական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի պատասխանատու: 2019-2022 թվականներին եղել է Եվրոպայի խորհրդի՝ «Փաստաբանի մասնագիտության խթանումը Եվրոպական չափանիշներին համապատասխան» Եվրոպական միության Արեւելյան գործընկերության երկրների տարածաշրջանային ծրագրի ղեկավար: Արդարադատության ոլորտում չունենալով զգալի կենսագրություն՝ Կարապետյանը եկել է արդարադատության ոլորտ գուցե անպատճառ, բայց ոչ պատահական: Ըստ 2023 թվականի եկամուտների, անշարժ գույքի, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ Կարեն Կարապետյանը հայտարարագրել է 2 բնակարան բազմաբնակարան շենքում, որից մեկը ձեռք է բերվել 2018 թվականին Արաբկիր վարչական շրջանում, իսկ մյուսը՝ 2020 թվականին ձեռք բերված բնակարանը, նվիրատվություն է, որը գտնվում Կենտրոն վարչական շրջանում: ՀՀ արդարադատության փոխնախարարը հայտարարագրել է 2019 թվականին ձեռք բերված 2011 թվականի արտադրության Volvo մակնիշի մեքենա: Փոխնախարարի բանկային ավանդները կազմել են 2 մլն 965 հազար դրամ, բանկային մնացորդները՝ 6 հազար եվրո եւ գրեթե 1 մլն 800 հազար դրամ: Փոխնախարարի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 542 հազար դրամ, որից 12 մլն 757 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ արդարադատության նախարարությունից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

Նիկոլ Փաշինյանի իշխանությունն ինչպես մեծ շուքով ու ոգեւորությամբ 2020 թվականին Իսրայելում ՀՀ դեսպանություն բացեց ու դիվանագիտական հարաբերություններ հաստատեց այդ երկրի հետ, հիմա էլ նույն ջանասիրությամբ փորձում է քանդել Իսրայելի հետ հարաբերությունները: Նախ իսրայելա-պաղեստինյան գերլարված հարաբերությունների ֆոնին՝ օրեր առաջ Հայաստանը հայտարարեց, որ ճանաչում է Պաղեստինի պետությունը, ինչից հետո Իսրայելի ԱԳՆ-ն խիստ նկատողություն տալու համար զրույցի է կանչել Թել Ավիվում Հայաստանի դեսպան Արման Հակոբյանին, իսկ Իսրայելի վարչապետի գրասենյակն էլ պաշտոնապես հայտարարեց, որ Պաղեստինի պետականությունը ճանաչելու որոշումը բացասական ազդեցություն կունենա հայ-իսրայելական հարաբերությունների վրա: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեկ Երեւանում, ավելի կոնկրետ՝ «Մարիոթ» հյուրանոցում պետք է Իսրայելի անկախության օրվան նվիրված միջոցառում լիներ, որին հրավիրված էին նաեւ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, սակայն անակնկալ կերպով չեղարկվել է միջոցառման կայացումը: Նշենք, որ ընդամենը օրեր առաջ էլ Նիկոլ Փաշինյանը հերթական սկանդալն էր ստեղծել նաեւ Բելառուսի հետ՝ հայտարարելով, որ ինքը եւ Հայաստանից որեւէ այլ պաշտոնյա չեն այցելի Բելառուս, քանի դեռ այդ երկրի նախագահը Ալեքսանդր Լուկաշենկոն է: Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը, Թուրքիայի ու Ադրբեջանի հետ ամեն գնով հարաբերությունները կարգավորելուն զուգահեռ, լծված է այլ երկրների հետ հարաբերությունները փչացնելու գործին:



Վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի «Իմ քայլը» հիմնադրամը իր պաշտոնական կայքում հաղորդագրություն է տվել նախօրեին դրամահավաքի արդյունքում գոյացած 42 միլիոն դրամը սկսնակ կին գործարարներին բաշխելու մասին: Հիշեցնենք, որ 42 միլիոնը գոյացել էր հատուկ այդ նպատակով կազմակերպված ընթրիքի արդյունքում՝ մեկ ընթրող/մեկ միլիոն սկզբունքով: Եվ ահա, պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ «Իմ քայլի» աշխատակից Վահագն Թեւոսյանը «առաջարկել» է միլիոնանոց ընթրիքները դարձնել շարունակական: *Հ.Գ. Զարմանալի է, թե «նախկիները» իրենց թալանը ինչո՞ւ չէին կազմակերպում ընթրիքի անվան տակ: Գեղեցիկ է հնչում՝ ընթրիք, կին գործարարներ....*

ԶՐՈՒՅՑ

ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ArmLur.am-ը ընթացիկ քաղաքական իրադարձությունների վերաբերյալ զրուցել է Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ Արտակ Զեյնալյանի հետ:

-Պարոն Զեյնալյան, գիտենք, որ չորս քաղաքական ուժեր, այդ թվում՝ նաեւ Արամ Սարգսյանի «Հանրապետություն»-ը առաջարկում են հանրաքվեի դնել Հայաստանի՝ ԵՄ անդամակցության հարցը: Ձեր դիտարկմամբ սա ի՞նչ հեռանկար ունի, ընդ որում՝ ժամանակ են հատկացրել՝ 3-4 ամսում որոշել. այս պայմաններում Դուք ինչպե՞ս եք այդ գործընթացը պատկերացնում, մեր հասարակությունը, քաղաքական դաշտը պատրա՞ստ են արդյոք ԵՄ անդամակցությանը:

-Հասարակական հարցումները վկայում են, որ մեր հասարակությունը տրամադրված է դեպի Եվրամիություն, եւ Եվրամիությանը անդամակցելուն: Մենք կարծում ենք, որ սա անվտանգային խնդիր է նաեւ լուծում Հայաստանի համար, նաեւ անդամակցության միջոցով կտեսնենք, թե իրական պատկերն ինչպիսին է: Մեր առաջարկությունը սրա վերաբերյալ է՝ օգնելու Հայաստանին բարձրացնել Հայաստանի անվտանգությունը. նպատակը սա է եւ ժողովրդի իրական տրամադրությունները պարզելը:

-Ինչպես ասացիք՝ «կբարձրացնի Հայաստանի անվտանգությունը». ի՞նչ միջոցներով սակայն Եվրամիությանն անդամակցելը մեզ նոր անվտանգային երաշխիքներ կտա, այն դեպքում, երբ տեսնում ենք, որ մինչեւ օրս հայտարարություններ են հնչում տարբեր հարթակներից, բայց այդ ամենը Ադրբեջանին չեն զսպում:

-Ես համաձայն չեմ, թե Ադրբեջանին չեն զսպում: Ադրբեջանին, ճիշտ հակառակը, զսպում են. Եվրամիության դիտորդները իրենց բավականին լուրջ ներդրումն են ունեցել Հայաստանի անվտանգության հարցում:

-Բայց մինչեւ օրս էլ տեսնում ենք՝ Ադրբեջանը պարբերաբար սադրանքների է դիմում, ինչպե՞ս էապա սաստում:

-Եվրադիտորդների՝ Հայաստանի սահմանների դիտարկելուց ի վեր՝ էապես նվազել են սադրանքները եւ, երբ լինում են միջադեպեր, Եվրադիտորդները իրենց դիրքորոշումը հայտնում են, ու դա շատ ավելի հեղինակավոր է միջազգային ատյանների համար, որպեսզի նրանք միջամտեն, կամ որի հետեւանքով նաեւ զսպեն Ադրբեջանի ախորժակը:

-Պարոն Զեյնալյան, քաղաքական անցուդարձում արդեն շուրջ 2 ամիս է ընդդիմադիր շարժում է ձեւավորվել՝ Բագրատ Սրբազանի գլխավորությամբ, հանրահավաքներ, խաղաղ անհնազանդության ակցիաներ են անցկացվում, Ձեր կուսակցությունն այն դիրքորոշումն ունի, որ շարժումը ուղղորդվում է «ռուսական կողմից» (այդպես են կարծում կուսակցության Ձեր գործընկերները), Դուք կիսո՞ւմ եք այդ տեսակետը, եւ որտեղի՞ց կան փաստեր, որ առկա է ռուսական միջամտություն:

-Դա մեր վերլուծությունն է, եւ մեր կուսակցության համոզմունքը, թեպետ ոչ միայն մեր կուսակցության: Բազմիցս եղել են Ռուսաստանից ազդակներ դրա վերաբերյալ, եւ այն, ինչ իրականացվում է, ձեռնտու է Ռուսաստանին: Ես ասել եմ, որ սա «Մեղրիի միջանցքի մասին» է, ոչ թե «Տավուշի...», իրականությունը այլ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ

ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՆ ԱՅՑԵԼԵԼ

Հունիսին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցները այցելել են Արցախի Հանրապետության գերեվարված առաջնորդներին: Այս մասին ադրբեջանական լրատվամիջոցներին հայտնել է Ադրբեջանում ԿԽՄԿ ներկայացուցչության հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավարը:

Այցի հետ կապված այլ մանրամասներ չեն նշվում:

Նշենք, որ այցելությունների ընթացքում ԿԽՄԿ-ն գնահատում է նրանց նկատմամբ վերաբերմունքը, պահման պայմանները եւ հնարավորություն է ստեղծում վերականգնելու կամ շարունակելու կապը ընտանիքների հետ:

ԿԽՄԿ ընթացակարգերի համաձայն՝ տեսակցությունների վերաբերյալ դիտարկումներն ու առաջարկությունները տրամադրվում են բացառապես կալանավորված կողմին:

Ավելի վաղ ադրբեջանական լրատվամիջոցները հայտնել էին, որ ԼՂ նախկին ղեկավարության քրեական գործերով քննչական գործողություններն ավարտվել են, եւ դրանք առաջիկա օրերին կուղարկվեն դատարան: Խոսքը 15 գործի մասին է:

Հիշեցնենք՝ նախորդ տարվա սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղի բռնի հայաթափման ժամանակ, ապօրինաբար ձերբակալվել եւ Բաքու են տեղափոխվել, ապա կալանավորվել ԼՂ նախկին ղեկավարության ներկայացուցիչները՝ նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, ԱԳ նախկին նախարար Դավիթ Բաբայանը, ԱԺ նախկին նախագահ Դավիթ Իշխանյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, ՊԲ նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, գեներալ Դավիթ Մանուկյանը:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

«Միասին» այլընտրանքային, հասարակական-քաղաքական շարժման համակարգող խորհուրդը հաղորդումներ է ներկայացրել ՀՀ դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե եւ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Հաղորդում ներկայացնելու դրդապատճառը 2024 թվականի հունիսի 12-ին կատարված իրադարձություններն են:

Հիշեցնենք, որ հունիսի 12-ին Բաղրամյան-Դեմիրճյան խաչմերուկներում «Տավուշի հանուն հայրենիքի» նախաձեռնությունը Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի գլխավորությամբ հանրահավաք էր իրականացնում, ինչի ժամանակ էլ ոստիկանների կողմից կիրառվեցին լուսաձայնային նռնակներ:

«Միասին» շարժումն անհրաժեշտ է համարում քրեական վարույթ նախաձեռնել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանի, ՀՀ ՆԳՆ Ոստիկանության զորքերի հրամանատար, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալ, գեներալ-մայոր Հայկ Բաբայանի գործողությունների առնչությամբ: Ըստ շարժման համակարգող խորհրդի՝ ոստիկանական վրեժը քաղաքացիների հանդեպ կամ մասնագիտական անհամապատասխանությունը պետք է բացահայտվեն եւ համարժեք պատժի արժանանան:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

«ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈԿՈՐԴԻՆ Է ՄՆԱԼՈՒ»

Իր ֆեյսբուքյան էջում ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը գրել է. «Յուրաքանչյուր նիստ ոչ միայն հերթական արձանագրումն է այն բանի, որ տեղի ունեցողը բացառապես քաղաքական գործ է, այլ ամրագրումն է այն պարզ ճշմարտության, որ Արմենի՝ բանտում գտնվելը բացառապես իշխանության չստացված քաղաքական հաշվարկի հետեւանքն է:

Արմենը պայքարել ու պայքարում է ոչ թե իր ազատության, այլ այս իրավիճակի արմատական փոփոխության, շատ-շատ այլ քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար, ովքեր իշխանությանն այս կամ այն կերպ քաղաքական, քաղաքացիական դիմադրություն են ցուցաբերել ու հայտնվել թիրախում»:

ԲԱՔՎԻ ՀԵԳՆԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

«Հայաստանի կողմից Ադրբեջանին փոխանցված ականապատ դաշտերի քարտեզները ճշգրիտ չեն եւ ոչ բոլոր տարածքներն են ներառում», - հայտարարել է Ադրբեջանի ականազերծման պետական գործակալության՝ ANAMA-ի ղեկավար Վուգար Սուլեյմանովը:

Ադրբեջանցի պաշտոնյայի խոսքով՝ Հայաստանի իշխանությունների տրամադրած փաթեթում ներառված են միայն ռազմական բախումների տարածքները:

44-օրյա պատերազմից հետո պաշտոնական Երեւանն առանց նախապայմանների ադրբեջանական կողմին է փոխանցել Արցախի ականապատ դաշտերի 972 տեղեկամատյաններ:

2023 թվականի դեկտեմբերի 7-ին Հայաստանի վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի նախագահի վարչակազմի միջեւ բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շոշափելի քայլեր ձեռնարկել՝ երկու պետությունների միջեւ վստահության կառուցման ուղղությամբ:

Այդ պայմանավորվածությունից վեց օր անց 32 գերիներ հայրենադարձվեցին Հայաստան: Պաշտոնական Երեւանն էլ այս տարվա հունվարի 26-ին Հայաստանն ականապատ դաշտերի 8 նոր տեղեկամատյան հանձնեց Ադրբեջանին, սակայն Բաքվի արձագանքը խիստ բացասական եւ հեգնական էր. Բաքուն պնդեց, թե պատերազմից հետո Հայաստանի տրամադրած քարտեզների ճշգրտությունն ընդամենը 25 տոկոս է՝ շեշտելով՝ վերջին տարիներին ականների պայթյունների ավելի քան 55 տոկոսը տեղի են ունեցել այն տարածքներում, որոնց վերաբերյալ Հայաստանը քարտեզներ չի տրամադրել: Երեւանն էլ արձագանքեց՝ ավելի լավ որակի քարտեզներ պարզապես չկան:

ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՋԱՆՔԵՐ

ԱՄՆ պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը լրագրողների հետ ճեպազրույցում անդրադարձել է միջազգային եւ տարածաշրջանային մի շարք զարգացումների: Նա նշել է, որ Վաշինգտոնը շարունակում է կապի մեջ լինել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ եւ ջանքեր է գործադրում՝ լուծելու երկրների միջեւ առկա խնդիրները:

Նա մեկնաբանել է Գազայի հատվածի շուրջ իրավիճակը: Միլլերի խոսքով՝ ամերիկյան կողմը հավատարիմ է Իսրայելի անվտանգության ապահովմանը: «Միեւնույն ժամանակ կարեւոր է, որ Իսրայելը ապահով եւ իրատեսական ծրագիր ունենա՝ինչպիսին պետք է լինի հետկոնֆլիկտային շրջանը», - նշել է պաշտոնյան, ընդգծել հետագա էսկալացիայից խուսափելու անհրաժեշտությունը:

Միլլերի խոսքով՝ Վաշինգտոնը պնդում է, որ ՀԱՄԱՍ-ը պետք է ոչնչացվի: «Սակայն հարկավոր է մտածել՝ հետագայում ով պետք է փոխարինի նրանց: Հավատացած ենք, որ ղեկավարությունը պետք է անցնի պաղեստինցիներին», - ասել է Պետքարտուղարության խոսնակը:

ԹՈՂ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ

Քաղաքների եւ նահանգների միջեւ համագործակցության հարցերով ԱՄՆ պետքատուղարության հատուկ ներկայացուցիչ Նինա Խաչիգյանը X-ի իր միկրոբլոգում կիսել է տպավորությունները Սյունիք կատարած այցից:

«Նախքան տուն գնալը ես հանգստյան օրերն անցկացրի Սյունիքում՝ Հայաստանի հարավում: Իսկապես անհավանական վայր է: Պատմությունը, մշակույթը, հրաշալի մարդիկ եւ բնության գեղեցկությունը հիացրել են ինձ:

Սյունիքի բնական գեղեցկությունն ապշեցուցիչ է, իսկ շուրջբոլորը հնագույն պատմություն է: Հայերն ու նրանց նախնիներն այստեղ են ապրում հազարավոր, նույնիսկ տասնյակ հազարավոր տարիներ: Թող խաղաղությունը շարունակվի գալիք հազարամյակների ընթացքում:

Ինչպես Հայաստանում ամենուրեք, այնպես էլ Սյունիքում կան գեղեցիկ հին եկեղեցիներ, քանի որ Հայաստանն առաջին պետությունն էր, որն ընդունեց քրիստոնեությունը մ.թ. 301 թվականին: Որոշ կառույցներ, որոնք մենք տեսանք, վերաբերում են մեր թվարկության 400-ականներին: Ճոպանուղով անհավանական երկար ճանապարհ անցանք, որպեսզի հասնենք դրանցից մեկին՝ Տաթեւի վանական համալիրին»,- գրել է հայազգի ամերիկացի պաշտոնյան:

Նա անդրադարձել է նաեւ Գորիս կատարած այցին: «Գորիսը գեղեցիկ քաղաք է: Լեռնային Ղարաբաղի/Արցախի ռազմական գրավումից փախած ավելի քան 100.000 հայերից շատերն առաջինը հանգրվանել են հենց այս քաղաքում: Այդ հողի դատարկումը, որտեղ հայերն ապրել են հազարամյակներ, դեռ թարմ, ողբերգական հիշողություն է շատերի համար»,- նշել է Նինա Խաչիգյանը:

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է

ՑԱՆԿԱԼԻ Է՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉՀՐԱՊԱՐԱԿՎԵՆ

Հունիսին Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցներն այցելել են Բաքվի բանտում գտնվող Արցախի նախկին պաշտոնյաներին: Այս մասին ԱՊԱ-ին հայտնել է ԿԽՄԿ ներկայացուցչության հասարակայնության հեռ կապերի բաժնի ղեկավար Իլահա Հուսեյնովան:

Նրա խոսքով՝ վերջինների հետ առանձնազրույցներ են տեղի ունեցել, պայմաններ են ստեղծվել՝ընտանիքների հետ շփման համար:

ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել «Միջազգային եւ համեմատական իրավունքի հայկական կենտրոնի» նախագահ Սիրանուշ Սահակյանի հետ հասկանալու համար՝ ինչ վիճակում էին այնտեղ գտնվողները. «Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները որոշակի հանգամանքների մասին կոնֆիդենցիալ հիմունքներով տեղեկացնում են ընտանիքի անդամներին, որը ցավոք սրտի հրապարակման ենթակա չէ»:

Սիրանուշ Սահակյանի խոսքով՝ ընտանիքի անդամները իրավունք ունեն իրենց անմիջական շփումների ընթացում ստացած տեղեկատվությունը հրապարակել, բայց սա էլ երբեմն բացասաբար է անդրադառնում անվտանգության վրա, ուստի այս փուլում ընտանիքի անդամները զերծ են մնում հրապարակայնորեն վերաբերմունքի, այնտեղ գտնվելու այլ հանգամանքների մասին մեկնաբանություններ տալուց:

«Իհարկե այդ տեղեկատվությունը հավաքվում է, ամրագրվում է, բայց մասամբ օգտագործվում են դատական գործընթացներում ունեն ապացուցողական նշանակություն, անհրաժեշտ են այնտեղ պահվող հայերի իրավունքների պաշտպանության համար, ուստի, հենց այդ նկատառումներից ելնելով, ներկայացվում է: Այս հանգամանքներում, ցավոք սրտի, այդ տեղեկատվությունը բացահայտելի չէ», - հավելեց նա:

Հիշեցնենք, որ երեկ ArmLur.am-ը գրել էր Ադրբեջանի գլխավոր դատախազի հայտարարության մասին. Ադրբեջանի գլխավոր դատախազը խոսել է Բաքվում ապօրինաբար կալանավորված քաղաքական գործիչների քրեական գործերի վերաբերյալ:

«Քրեական գործերով քննչական գործողություններն ավարտվել են եւ առաջիկայում կուղարկվեն դատարան: 15 անձի վերաբերյալ նախաքննությունն արդեն ավարտվել է: Մեղադրյալները, փաստաբանները, տուժողները ներկայումս ծանոթանում են քրեական գործի նյութերին, ծանոթացման փուլն ավարտվելուց հետո՝ մեղադրական եզրակացությունը կուղարկվի դատարան», - ասել է նա:

ArmLur.am-ի հետ զրույցում Սիրանուշ Սահակյանը նաեւ հայտնել էր. «Նախաքննությունը ընթացքի մեջ է եղել, ընդամենը այս հաղորդագրությամբ նրանք ազդարարել են նախաքննության ավարտը, ինչը նշանակում է, որ մեր կողմից կանխատեսվող դատավարությունները կսկսվեն, կընթանան»:

Նրա խոսքով՝ մնում է հասկանալ՝ դատավարությունների անցկացման կարգը՝ դռնփակ, դռնբաց, հանրայնացման աստիճանը եւ մի շարք այլ հանգամանքներ:

«Հայկական կողմի դիրքորոշումը այն է, որ ի սկզբանե ազատությունից զրկելը եղել է ապօրինի, այդ դատավարությունները ցուցադրական են, թե՛ նախկին թե՛ ներկա ռազմագերիների առնչությամբ չեն պահպանվում արդար դատաքննության իրավունքի կարեւոր տարրերը, այստեղ մենք կարեւոր խախտումների հետ ենք գործ ունենալու եւ այդ դատավարությունների արդյունքները չեն կարող ընդունելի լինել միջազգայնորեն:

Սրան պետք է հավելենք նաեւ ընդհանուր դատական համակարգի ծայրահեղ վատ վիճակ է Ադրբեջանում, որը միջազգային կառույցների կողմից քննադատվում է քաղբանտարկյալներ ունենալու հարցով, բազմիցս արձանագրվել է հեռախոսային դատավարությունը եւ նախագահի վարչակազմում արդարադատություն իրականացնելու անթույլատրելի պրակտիկան, ուստի հայկական կողմը ընդամենը միջազգային մեխանիզմների գործարկմամբ պետք է նաեւ իրավական առումով չեզոքացնի դատական ակտերը»:

Սիրանուշ Սահակյանը կարծում է, որ զուգահետաբար պետք է աշխատանք տարվի, հիմնականում՝ դիվանագիտական եւ քաղաքական, որպեսզի Ադրբեջանը ազատ արձակի նաեւ ապօրինաբար բանտարկության վերցրած հայերին:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԼԽԱՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղում ծնված Ալխաս Ղազարյանը ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համապետական ընտրական ցուցակով 2021 թվականին:

Ալխաս Ղազարյանը Վաղաշեն գյուղում հայտարարագրել է 12 անշարժ գույք՝ հողամաս՝ ձեռք բերված 1992 թվականին: Ըստ 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրի՝ պատգամավորը 2023 թվականին ձեռք է բերել եւս մեկ անշարժ գույք՝բնակարան բազմաբնակարան շենքում: Բնակարանը գտնվում է Երեւան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանում, որի արժեքը կազմել է 30 մլն 792 հազար դրամ:

Պատգամավոր Ալխաս Ղազարյանի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 400 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 1 մլն 500 հազար դրամ:

ԱԺ ՔՊ-ական Ղազարյանի հաշվետու տարվա եկամուտները կազմել են 12 մլն 297 հազար դրամ, որից 10 մլն դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովից:

Տարեկան եկամտի 2 մլն դրամը կուտակվել է ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ընդհանուր եւ օրգանական քիմիայի ինստիտուտից, որի մի մասը աշխատանքի վարձատրություն է, մյուս մասը՝ քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացված եկամուտ:

Ալխաս Ղազարյանի ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը, հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կազմել է 35 մլն 607 հազար դրամ, որից 27 մլն դրամը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ

ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Պաղեստինի Պետության վարչապետ, արտաքին գործերի եւ սփյուռքի նախարար Մոհամմեդ Մուստաֆայի հետ:

Պաղեստինի վարչապետը շնորհակալություն է հայտնել Հայաստանի կողմից Պաղեստինի ճանաչման հարցում ցուցաբերված սկզբունքային մոտեցման համար:

ՀՀ ԱԳ նախարարն ընդգծել է, որ ՀՀ որոշումը հիրավի պայմանավորված է «երկու պետություն» սկզբունքով կարգավորմանն աջակցելու, մարդկային մեծ կորուստների հանգեցնող իրավիճակի հանգուցալուծման կարեւորության հարցում հետեւողական դիրքորոշմամբ:

Անդրադարձ է կատարվել երկկողմ հարաբերությունների եւ քաղաքական երկխոսության զարգացման հարցերի:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻԼԻ ՄԵՋԼԻՍԸ ՔՆՆԱԴԱՏԵԼ Է

Մեջլիսի այսօրվա նիստում պատգամավոր Թուրալ Գյանջալիեւը հայտնել է, որ «Ֆրանսիան իր ագրեսիվ քաղաքականությունը հասցնում է մինչեւ Հարավային Կովկաս»:

«Պատգամավորը նշել է, որ Ֆրանսիայի կողմից Հայաստանի զինումը մահացու զենքով՝ լուրջ սպառնալիք է ստեղծում. «Հարավային Կովկասում մենք խաղաղություն ենք ստեղծել: Մեզ համար գլխավորն այն է, որպեսզի Հարավային Կովկասը չդառնա մարտադաշտ:

Ցավոք, Մակրոնը, որն այսօր իրեն Նապոլեոն է կարծում, ցանկանում է իր խաղերը խաղալ եւ դա անել Հարավային Կովկասում: Մակրոնի, Ֆրանսիայի այդ քայլը քայլ է ոչ միայն Ադրբեջանի, այլեւ ողջ աշխարհի դեմ: Ֆրանսիան պետք է կանխի մարդու իրավունքների խախտումներն այն երկրներում, որոնք նա պահում է օկուպացիայի տակ», - մեջբերել է պարբերականը պատգամավորից:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ԿԱԼԱՆՔ

ՏԱՐԵՑՆԵՐԸ ՎԻՃԵԼ ԵՆ. ԿԱ ԴԱՆԱԿԱՀԱՐՎԱԾ

2024 թվականի հունիսի 21-ին՝ ժամը 16:21-ին, «Վեդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ Վեդի համայնքի Կայան փողոցի շենքերից մեկի բակում դանակահարության հետեւանքով ստացած կրծքավանդակի ձախ կեսի վնասվածքով իրենց մոտ բուժօգնության է դիմել 62-ամյա տղամարդ:

Անմիջապես դեպքի վայր է մեկնել քննչական-օպերատիվ խումբը, որի կողմից իրականացված անհրաժեշտ միջոցառումների արդյունքում պարզվել են հիվանդանոց տեղափոխված տղամարդու մարմնական վնասվածք ստանալու էական հանգամանքներ, այդ թվում՝ շարժառիթը եւ ենթադրյալ հանցագործություն կատարած անձի ինքնությունը, ով տուժողի 71-ամյա հարեւանն է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Տվյալներ են ստացվել այն մասին, որ նշված օրը՝ ժամը 15:55-ի սահմաններում, շենքի բակում երկու հարեւաններն անձնական հարցերի շուրջ վիճաբանել են միմյանց հետ, որի ընթացքում 71-ամյա տղամարդը դանակով հարվածել է 62-ամյա հարեւանին՝ որովայնի շրջանում պատճառելով կտրած ծակած թափանցող երկու վերքի տեսքով մարմնական վնասվածքներ՝ սուր ներքին արյունահոսությամբ:

Բժշկական կենտրոնում տուժողը ենթարկվել է վիրահատության, որից ժամեր անց, սակայն, գիտակցության չգալով, մահացել է:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, առերեւույթ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով, 71-ամյա տղամարդը ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել է եւ ներկայացվել վարույթն իրականացնող մարմնին:

Կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել են արնանման հետքեր, վերցվել են փորձանմուշներ: Ձերբակալված անձի բնակարանի զննության արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել է ենթադրյալ հանցագործության գործիք հանդիսացող դանակը:

Տուժողի մարմնական վնասվածքների բնույթը, առաջացման մեխանիզմը եւ մի շարք այլ հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 71-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ եւ 15-րդ կետերով (զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի գործադրմամբ անձին ծանր մարմնական վնասվածք հասցնելը, որը անզգուշությամբ առաջացրել է մահ):

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորում կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԾԵԾԻ Է ԵՆԹԱՐԿԵԼ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ

2024 թվականի հունիսի 21-ին քաղաքացին հաղորդում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 11:15-11:20-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Կոմիտասի պողոտայում գտնվող «SAS» սուպերմարկետի դիմաց անհայտ քաղաքացին վիճաբանել է իր եւ եղբոր հետ, որի ընթացքում մահակով հարվածներ է հասցրել իրենց, եւ եղբայրը գտնվում է անգիտակից վիճակում:

Ըստ բժշկական կենտրոնից ստացված տեղեկանքի՝ տղամարդկանցից մեկը բժշկական կենտրոն է տեղափոխվել «գլխուղեղային վնասվածք» ախտորոշմամբ:

Ստացված հաղորդման առթիվ նույն օրը ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 166-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ, ձեւավորվել է քննչական խումբ, որն անմիջապես ձեռնամուխ է եղել կատարվածի հանգամանքները պարզելուն ուղղված անհետաձգելի քննչական եւ վարութային միջոցառումների կատարմանը: Մասնավորապես, եղբայրները ճանաչվել են տուժող, նույն օրը բուժհաստատությունում նրանցից մեկը հարցաքննվել է, մյուսի հետ քննչական գործողություն հնարավոր չի եղել կատարել՝ վերջինիս առողջական վիճակով պայմանավորված:

Վարույթի շրջանակներում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաեւ կատարված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ եղբայրներին նշված վայրում ծեծի է ենթարկել Երեւան քաղաքի 28-ամյա բնակիչը:

Մասնավորապես, քննությամբ պարզվել է, որ 2024թ. հունիսի 21-ին «SAS» սուպերմարկետի դիմաց՝ ավտոկայանատեղիների համար նախատեսված հատվածում, երկու եղբայրների եւ Երեւան քաղաքի 28-ամյա բնակչի միջեւ տեղի է ունեցել խոսակցություն, որը վերաճել է վիճաբանության: Այդ ընթացքում վերջինս բռունցքով հարվածել է եղբայրներից մեկին, ապա մոտակայքում կայանված մեքենայի բեռնախցիկից վերցնելով փայտյա մահակը՝ դրանով մի քանի հարվածներ է հասցրել եղբայրների մարմնի տարբեր հատվածներին, այդ թվում՝ գլխին՝ պատճառելով ծանր մարմնական վնասվածքներ:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից կայացվել է կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելու նպատակով դատարան ներկայացնելու համար մեղադրյալին ձերբակալելու որոշում:

Նախաքննությունը շարունակվում է:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՔԵՆԱՅԻՑ

Հունիսի 23-ի լուսադեմին՝ ժամը 05.36-ին, ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգահարած քաղաքացին հայտնել էր, որ Լենինգրադյան փողոցի շենքերից մեկի մոտ կայանված «Շեւրոլե» մակնիշի մեքենայից կատարվել է գողություն:

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզներն ու Երեւանի գնդի 4-րդ գումարտակի 3-րդ վաշտի պարեկները համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում հանցագործությունը բացահայտեցին թարմ հետքերով: Գողություն կատարելու հիմնավոր կասկածանքով ձերբակալվեց եւ Մաշտոցի բաժին տեղափոխվեց Միկոյան փողոցի բնակիչ 27-ամյա մի երիտասարդ:

Տուժողից ընդունվել է հաղորդում. նա հայտնել է, որ հունիսի 22-ի ժամը 22-ից հունիսի 23-ի ժամը 6-ն ընկած ժամանակահատվածում գողացել են շենքի բակում կայանված «Շեւրոլեի» լուսարձակները:

ԼՈՒՐԵՐ

ԱՐԱԲԿԻՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ ԿՐԱԿՈՑ Է ՀՆՉԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հունիսի 24-ին՝ ժամը 20:25-ին, 1-ին համալսարանական հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ Ա. Ավետիսյան փողոցից հրազենային վնասվածքով տղամարդ է տեղափոխվել՝ «սրունքի առաջնային մակերեսի գնդակային վիրավորում» ախտորոշմամբ:

Պարզվել է, որ հրազենային վնասվածքը ստացել է Կ.Թ-ն, որը վնասվածքը ստացել է նշված հասցեում զենքի գնդակին մուրճով հարվածելու հետեւանքով:

Իրավապահները ստուգել են քաղաքացու հայտնած տեղեկությունը եւ պարզվել է, որ Կ.Թ.-ն իր կամքից անկախ հանգամանքերում հրազենով կրակոց է արձակել եւ ստացել վնասվածք: Հրազենն առգրավվել է, որը եղել է գազային ատրճանակ:

ՆԱԽԿԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԿԵՂԾ ԱՀԱՋԱՆԳԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գրիշա Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, ալկոհոլ օգտագործած վիճակում, 2023 թվականի դեկտեմբերի 30-ին զանգահարել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն եւ հայտնել ահաբեկչության մասին սուտ տեղեկություն՝ իր կողմից Արտաշիսյան 46 ա հասցեում գտնվող «Սուրբ Աստվածամայր» մանկական հիվանդանոցը պայթեցնելու վերաբերյալ:

Նա նախկինում դատապարտված է եղել:

Գրիշա Մարտիրոսյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա 2020 թվականի մարտի 20-ին, մեկ տարի ժամանակով զրկված լինելով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, 2020 թվականի հուլիսի 11-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Մասիս քաղաքի Երեւանյան փողոցում գտնվող գերեզմանատան մոտ վարել է «Օպել Աստրա» մակնիշի 36 ՈՐ 595 հաշվառման համարանիշի ավտոմեքենան, որի ընթացքում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ վթարի ենթարկվել, որն էլ հայտնաբերվել է ՀՀ ոստիկանության 2-րդ սպայական գումարտակի 1 ին սպայական վաշտի ՃՏՊ գործերի հետաքննության եւ ՎՎԻ խմբի ավագ տեսուչ Մարգար Գեղամի Մարգարյանի կողմից եւ կազմվել զեկուցագիր:

Գրիշա Գարիկի Մարտիրոսյանը մեղավոր էր ճանաչվել նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ նշանակվել էր պատիժ տուգանքի ձեւով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով՝ 200.000 դրամ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 24-ից 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 2-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ՝ ՎԱՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Տավուշի մարզպետարանի պաշտոնյաները 2023 թվականին պետական բյուջեից պարգեւատրվել են 71 միլիոն 960 հազար դրամի չափով: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան հարցնելով, թե 2024 թ. հունիսի 1-ի դրությամբ Տավուշի մարզպետարանի աշխատողները պետբյուջեից ընդհանուր առմամբ որքա՞ն պարգեւավճար են ստացել: Մարզպետարանից պատասխանել են. «2024 թվականի հունիսի 15-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի թվով 68 աշխատակիցներ ստացել են 32075.2 հազար դրամի պարգեւատրում»: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ մարզպետարանի պաշտոնյաները թերանում են իրենց աշխատանքում, մասնավորապես, մարզպետարանում չգիտեն, թե մարզպետարանի ենթակայությամբ գործող Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ընդհանուր թվով քանի ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը, անտեղյակ են թե Տավուշում վթարային քանի տուն, բազմաբնակարան շենք կա, շուրջ 3 տարի է, ինչ մարզպետարանը չի լուծում սահմանամերձ Բարեկամավան գյուղի բուժկետի շենքի վերանորոգման կամ բուժկետն այլ տարածք տեղափոխելու խնդիրը: Տավուշի մարզպետարանը մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների միջոցով աշակերտներին պարտադրաբար ծախեն «Մադագասկար» շրջիկ կրկեսի տոմսերը, ինչը հարուցել է սոցիալապես անապահով ծնողների բողոքը: Մարզպետարանի պաշտոնյաները թերացել են իրենց աշխատանքում, սակայն վատ աշխատանքի համար պետական բյուջեից պարգեւատրվել են ավելի քան 32 միլիոն դրամի չափով, այն դեպքում, երբ այս տարին դեռ չի էլ կիսվել:

ՎՆԱՍԻ ՉԱՓԵՐԸ ԹԱՔՑՆՈՒՄ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով՝մայիսի 26-ի ջրհեղեղից որքա՞ն նյութական վնաս է պատճառվել Տավուշի մարզին, դրանցից որքա՞ն՝ մասնավոր սեկտորին, որքա՞ն՝համայնքներին, որքա՞ն՝ պետական հատվածին: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Մայիսի 26-ի ջրհեղեղի նյութական վնասները գույքագրված են, բայց արձանագված չեն մասնավորի, համայնքի եւ պետական հատվածների վնասների չափը»: Տավուշի մարզպետը, փաստորեն, խուսափել է պատասխանել հարցին, թե մայիսի 26-ի ջրհեղեղից որքա՞ն նյութական վնաս է պատճառվել Տավուշի մարզին, նշելով միայն, որ արձանագրված չեն մասնավորի, համայնքի եւ պետական հատվածների վնասների չափը: Նիկոլ Փաշինյանի հարսանիքի քավոր Հայկ Ղալումյանը իր սանիկ Նիկոլ Փաշինյանից «դաս» է առել՝ հարցին պատասխանելիս մանիպուլյացիայի դիմելու, հարցապնդմանը ըստ էության չպատասխանելու առումով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ «ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ» ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բնակիչները բողոքի ակցիա էին իրականացրել:

Վերջիններս պահանջում էին ՀՀ ՆԳ նախարարից «վերադարձնել» Չարենցավանի անձնագրային բաժինը, ինչը օրերս փակել են: Ըստ նրանց՝ փակման պատճառով ստիպված հասնում են Հրազդանի անձնագրային բաժին:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Չարենցավանի բնակիչ Գեւորգ Հակոբյանը, խոսելով այս թեմայի մասին, ասաց, որ ակցիայի վայրում ակցիայի բնակիչներից շատ բերվել են ոստիկաններ, որոնք վախեցնում էին տեղի բնակիչներին:

«Մենք ակցիա էինք նախատեսել, խաղաղ ակցիա: Դե մենք իրավունք ունենք ճանապարհը սահմանված ժամկետում փակելու, ասենք 5 րոպե, 10 րոպե, օրենքով նախատեսում են: Մեզանից շատ ոստիկաններ բերեցին «լցրեցին» այդտեղ, ոստիկանները բոլորին վախեցնում էին, անգամ՝ կանանց ու տարեց մարդկանց, ասում էին՝ հանկարծ մայթը չանցնեք՝ վարչական տուգանք կգրենք ձեզ վրա: Ոստիկանապետն իրեն վատ, շատ կոպիտ պահեց: Համենայնդեպս, մենք մեր ակցիան կատարեցինք, ոնց պետք էր արեցինք», - ասաց Գեւորգ Հակոբյանը:

Գեւորգ Հակոբյանի խոսքով՝ ակցիայից հետո տեղի բնակիչներով համապատասխան պաստառներ են փակցրել, սակայն գիշերը նկատել են, որ փակցված պաստառները հեռացվել են: Վերջինիս խոսքով՝ դրանք տարել են ոստիկանները:

«Ակցիայից հետո մենք մեր պաստառները փակցրինք համապատասխան վայրերում, բայց գիշերը իրենք պոկել տարել են, ինձ այդպես է թվում: Մենք դժգոհ ենք: Ոստիկանները խանգարել են մեր ակցիան, առանց որեւիցե լուրջ հիմքերի՝մարդկանց վրա ճնշում են գործադրել, որպեսզի մեքենաներից չիջնեն ու գան միանան մեզ: Մոտ 60-ից ավել ոստիկան կար, միայն դա հերիք էր, որ ճնշող լիներ մթնոլորտը: Մենք ուզում էինք ճանապարհով երթ անել, չթողեցին սակայն, հրում, հանում էին մայթերի վրա: Մենք մեր պաստառները փակցրել ենք կամրջի վրա՝աջ ու ձախ կողմերում, գիշերը ժամը 12-ին տեսել ենք, որ չկան պաստառները, ու մենք ենթադրում ենք, որ հենց իրենք են պոկել, ոչ մի չարենցավանցի իրեն թույլ չէր տա պոկել, ընդհակառակը՝ ամբողջ բնակչությունը մեր կողմից է: Մենք մեր պլակատները պահանջելու ենք», - ասաց բնակիչը:

Չարենցավանի բնակիչ Գեւորգ Հակոբյանը նաեւ նշեց, որ ոստիկանապետն իրենց ասել է՝ կապվեն իրենց վերադասի հետ:

«Ոստիկանապետը մեզ ասել է կապվենք մեր վերադասի հետ, իրենց մենք առաջարկում ենք՝ այս շաբաթվա մեջ 1 օր գան Չարենցավանի համայնքապետարան տարբեր ուժերի հետ՝ համայնքապետի, ավագանու անդամների հետ, որ ընդհանուր լեզու գտնենք, համաձայնության գանք, եւ մեզ ասել են, որ գրավոր գրենք, մենք էլ որոշեցինք գրավոր ձեւով մասսայական մի 10.000-ից ավել ստորագրություն հավաքել կարճ ժամանակում ու այդպես խոսենք իրենց հետ», - նշեց Գեւորգ Հակոբյանը:

Գեւորգ Հակոբյանից հետաքրքրվեցինք՝ արդյոք համայնքապետարանը այս խնդրով զբաղվե՞լ է, ինչին Հակոբյանը պատասխանեց. «Ավագանին 26-27 հոգով իր հերթին ոստիկանապետին ուղերձ էր հղել, որ քաղաքի շահերից չի բխում դա, վերանայեք ձեր որոշումը կամ ամեն բան չեղարկեք, բայց անկապ պատասխան է տրվել: Եթե իրենք վախենում են մեր պաստառներից, Վահե Ղազարյանից պահանջում ենք, որ մեր անձնագրային բաժինը հետ բերի, եթե դա է իրենց վախեցրել, որ պաստառները գողացել են. մենք ուրիշ կերպով կփակցնենք մեր պաստառները, օրինակ՝ վերելակներում, հիմնարկներում, շենքերում: Տարաբնույթ ակցիաներ ենք անելու: Այս շաբաթ էլ իրավաբանի հետ խորհրդակցելու ենք, որ ստորագրահավաքի տեքստը կազմենք, կնստենք մեր քաղաքի կենտրոնում ու ստորագրություններ կհավաքենք՝ ուղղված Վահե Ղազարյանին»:

Չարենցավանի բնակիչը վերջում հավելեց, որ ինչ-որ բան չստացվելու դեպքում՝ տեղի ժողովուրդը կհասկանա, թե հաջորդ ընտրությունների ժամանակ ում է ձայն տալու:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

ՍՊՐԻՆՏ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Համագործակցելով Հայաստանում Չեխիայի դեսպանության հետ՝ Թումո լաբերը ներկայացնում է 5-շաբաթյա DemTech սպրինտ, որը կենտրոնանում է ժողովրդավարության շուրջ տեխնոլոգիական լուծումների վրա: Հաղթող երեք թիմերը կստանան 1,250,000 ՀՀ դրամի մրցանակ:

Ծրագիրը կսկսվի ծանոթացմամբ 2024 թվականի հուլիսի 18-ին եւ կշարունակվի սպրինտով (հուլիսի 19 - օգոստոսի 22), որին կհաջորդի դեմո օրը օգոստոսի 23-ին, որի ժամանակ կընտրվեն հաղթող երեք թիմերը:

Սպրինտի ընթացքում մարդկային իրավունքների փորձագետները կներկայացնեն հասարակության մեջ ժողովրդավարությանը սպառնացող վտանգների օրինակներ, եւ ծրագրի մասնակիցները կստեղծեն տեխնոլոգիական լուծումներ այս խնդիրների համար: Մասնակիցները նաեւ կունենան UI/UX դասընթացներ՝ իրենց հմտությունները զարգացնելու համար:

Մասնակիցները նաեւ կհմտանան իրենց գաղափարները ներկայացնելու գործում, կմասնակցեն UI/UX, ինչպես նաեւ տեխնոլոգիական աշխատարանների: Ժյուրին կգնահատի եւ կորոշի, թե որոնք են հաղթող տեխնոլոգիական լուծումները:

Առաջին տեղի հաղթողները կստանան 600,000 ՀՀ դրամ, երկրորդը՝ 400,000, իսկ երրորդը՝250,000:

Ծրագրի ընթացքում մասնակիցները կունենան տարբեր աշխատարաններ եւ քննարկումներ, որոնց ընթացքում մարդկային իրավունքների, ժողովրդավարության, տեխնոլոգիաների եւ UI/UX ոլորտների մասնագետները կկիսեն իրենց գիտելիքներն ու փորձառությունները: Մասնակիցները կսովորեն, թե ինչպես միավորել ժողովրդավարությունն ու տեխնոլոգիաները եւ ստեղծել լուծումներ, որոնք կաջակցեն ժողովրդավարական պրակտիկներին: Մասնակիցները կսկսեն մշակել եւ կիրառել իրենց գաղափարները:

Ծրագրի մասնակիցները կարող են իրականացնել իրենց գաղափարները սպրինտից հետո:

Ովքե՞ր կարող են դիմել

Ծրագրին կարող են դիմել 18 տարին լրացած եւ 18 տարեկանից բարձր անձինք

Դիմորդներ, որոնք տիրապետում են անգլերենին (միջին մակարդակ)

Մասնակիցները կարող են դիմել անհատապես կամ որպես թիմ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար. 1 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄՐՑՈՒՅԹ

«ԴԱՐՁԻ՛Ր ԿԱՆԱՉ ՀՅՈՒՐԱՏՈՒՆ»

«Ակբա» ֆեդերացիան եւ Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղը մեկնարկում են «Գյուղական տուրիզմի զարգացման» ծրագրի 2-րդ՝ «Դարձի՛ր կանաչ հյուրատուն» դրամաշնորհային մրցույթը:

Ծրագրի շրջանակում հայտարարված՝ «Դարձի՛ր կանաչ հյուրատուն» դրամաշնորհային մրցույթի նպատակն է օգնել գյուղական վայրերում գործող այն հյուրանոցներին եւ հյուրատներին, որոնք ցանկություն ունեն ներդնելու բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համակարգեր:

Մրցույթին կարող են մասնակցել հետեւյալ հյուրանոցներն ու հյուրատները, որոնք.

. ցանկանում են ներդնել բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման համակարգ,

. գտնվում են գյուղական վայրում,

. պատկանում եւ կառավարվում են տեղի բնակիչների կողմից,

. ունեն առնվազն 5 սենյակ:

Դրամաշնորհային մրցանակի առավելագույն չափը 1.500.000 ՀՀ դրամ է:

Հաղթողները պարտավորվում են մինչեւ ս.թ. դեկտեմբերի 31-ն օգտագործել դրամաշնորհը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնող գործողությունների վրա, ինչպիսիք են թափոնների նվազեցումը, օգտագործված իրերի/ ռեսուրսների վերամշակումը, վերականգնվող էներգիայի օգտագործումը, ջրի խնայողությունը, կայուն գյուղատնտեսության աջակցումը եւ այլն:

Հաղթողները պետք է կատարեն տրամադրված դրամաշնորհին համարժեք սեփական ներդրում:

Դրամաշնորհային մրցույթին հնարավոր է դիմել մինչեւ 2024 թվականի օգոստոսի 1-ը: Մրցույթը կամփոփվի ս.թ. սեպտեմբերի 1-ին:

Այն հյուրանոցներն ու հյուրատները, որոնք արդեն իսկ ունեն ներդրված բնական ռեսուրսները խնայող համակարգեր, կարող են մասնակցել ծրագրի շրջանակում հայտարարված առաջին մրցույթին հետեւյալ հղմամբ:

Առաջիկայում կհայտարարվի նաեւ ծրագրի շրջանակում իրականացվելիք վերջին՝ 3-րդ մրցույթի մասին:

«Ակբա» ֆեդերացիան «Ակբա» բանկի միակ նշանակալից մասնակիցն է, բանկի բաժնետոմսերում ունի ավելի քան 81 տոկոս մասնաբաժին: Ակբա բանկում ունեցած մասնակցության շնորհիվ «Ակբա» ֆեդերացիան նպաստում է Հայաստանի ողջ տարածքում գյուղատնտեսության, գյուղական շրջաններում փոքր եւ միջին բիզնեսի զարգացմանը, համայնքների զարգացմանը, գյուղական շրջաններում եւ համայնքներում բիզնես միջավայրի աշխուժացմանն ու զարգացմանը, նշված ոլորտներում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող յուրաքանչյուր անձի բարեկեցության աճին:

Converse ԲԱՆԿ

ԸՆԴԳՐԿՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓԱԹԵԹ

C360-ի հիմքում բանկային ծառայությունների անհատականացումն է եւ միջազգային ու տեղական լավագույն փորձառությունը: «Կոնվերս» բանկում վստահ ենք, որ հաջողում է այն ընկերությունը, որը ճանաչում է իր հաճախորդներին եւ առաջարկում նրանց պահանջմունքներին առավելագույնս համապատասխանող, մրցունակ պրոդուկտներ:



C360-ը նախագծվել է հենց այս տրամաբանությամբ եւ առաջարկում է բանկային առանցքային ծառայությունները՝ մեկ փաթեթում: Ըստ որում՝ Converse Mobile հավելվածում յուրաքանչյուր հաճախորդ կարող է ընտրություն կատարել՝ մի քանի փաթեթից ընտրելով իր կարիքներին առավելագույնս համապատասխանողը:

Հաշվի փաթեթները, այդ թվում՝ C360-ը, հաճախորդի ընտրությունն են: Ողջ աշխարհում, համաձայն McKinsey Camp; Company (2019) եւ Deloitte (2019,2020) ընկերությունների վերլուծությունների, հաճախորդների 60-75%-ը նախընտրում է օգտվել բանկային ծառայությունների փաթեթներից՝ համարելով այս առաջարկը առավել գրավիչ: Այս առաջարկը հաճախորդների ընտրությունն է մի քանի պատճառով.

. Պարզություն: Հասկանալի է հաճախորդներին. նրանք գիտեն՝ կոնկրետ ինչքան են վճարում եւ ինչ ծառայությունների համար,

. Հարմարավետություն. կարիք չկա ընտրություն կատարելու տարբեր ծառայություններից, փաթեթը ներառում է անհրաժեշտ բոլոր պրոդուկտները,

. Ժամանակի եւ ֆինանսների խնայողություն. փաթեթի բաժանորդագրության վճարն անհամեմատ ավելի փոքր է, քան դրանում ներառված պրոդուկտների սակագների հանրագումարը,

. Հասկանալի ձեւաչափ՝ հաճախորդներն արդեն սովոր են օգտվել տարբեր ծառայություններից մեկ փաթեթում, օրինակ՝ հեռահաղորդակցության ոլորտում:

Յուրաքանչյուրը կգտնի իր պահանջներին համապատասխան C360 փաթեթը

Այս պահին Converse Mobile-ում բաժանորդագրության համար հասանելի է երեք փաթեթ՝ Neo, Ultra եւ Elite: Բաժանորդագրվելով դրանցից ցանկացածին՝ հաճախորդը կկարողանա օգտվել բանկային ընդգրկուն ծառայություններից միասնական՝ ավելի ցածր սակագնով: Բոլոր փաթեթները ներառում են տարբեր արժույթներով հաշվարկային եւ կուտակային հաշիվներ (կուտակային հաշվի դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվում է տարեկան եկամուտ՝ մինչեւ 3,5%-ի չափով), հիմնական եւ կից վճարային քարտեր, թվային Visa Virtual քարտ՝ տարբեր արժույթներով, անվճար կանխիկացում «ԱրՔա» համակարգի բանկոմատներում, վարկային սահմանաչափի հնարավորություն, SMS, քաղվածքներ, տեղեկանքներ՝ անվճար:

Կախված սակագնային պլաններից՝ կան նաեւ տարբերություններ: Այսպես. Neo փաթեթով հաճախորդներին է առաջարկվում Visa Classic կամ Mastercard Standard վճարային քարտեր:

Ultra փաթեթով՝ Visa Gold կամ Mastercard Gold վճարային քարտեր, ինչպես նաեւ 10% զեղչ անհատական պահատուփից օգտվելիս, Ջվարթնոց օդանավակայանի բիզնես սրահ մուտքի հնարավորություն, ճամփորդական ապահովագրություն:

C360 Elite փաթեթով՝ Visa Platinum վճարային քարտեր, ինչպես նաեւ 15% զեղչ անհատական պահատուփից օգտվելիս, ճամփորդական ապահովագրություն, Concierge ծառայություն, Ջվարթնոց օդանավակայանի Բիզնես սրահ եւ այլ օդանավակայանների բարձրակարգ սպասարկման սրահներ մուտքի հնարավորություն:

Զարգացումը շարունակական գործընթաց է. «Կոնվերս» բանկի մոբայլ հավելվածում շուտով հասանելի կդառնա նաեւ փաթեթը փոխելու հնարավորությունը:

Մենք հետեւում ենք միտումներին եւ հաճախորդների առավելագույն հարմարավետության նկատառումով շարունակաբար ներդնելու ենք նոր, այդ թվում՝ Հայաստանում եզակի հնարավորություններ: Ի վերջո, հաճախորդների աճող գոհունակությունը փաստում է, որ մենք զարգանում ենք ճիշտ ուղղությամբ:

Ի դեպ, նույն McKinsey Camp, Company-ի ուսումնասիրության արդյունքներով՝ փաթեթից օգտվողների գոհունակության ինդեքսը 15-25%-ով ավելի բարձր է, քան դրանում ներառված պրոդուկտներն առանձին- առանձին գնողներինը:

C360-ի շնորհիվ Դուք կզգաք բանկային ընդգրկուն ծառայություններից օգտվելու բոլոր առավելությունները:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Աճուրդի ընթացքում վաճառվելու են «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- Տավուշի մարզ, համայնք Դիլիջան, Դիլիջան ք., Պարզ լճի փողոց, 16 հասցեում գտնվող 782,9 քմ ռեստորան, 32,5 քմ շինություն, 10 քմ շինություն, 514,26 քմ հանդիսությունների սրահ, 221,05 քմ քոթեջ, 26,09 քմ ծածկ, 43,2 քմ /129,6 խմ/ պարիսպ, 63,16 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ եւ 0,3656 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 350000000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Ս. Մելիք-Ստեփանյան փողոց, 8/35 հասցեում գտնվող 62,7 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 21000000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Մ. Ստեփանյան փողոց, 12/34 հասցեում գտնվող 12,6 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 6000000 ՀՀ դրամ:

- Սյունիքի մարզ, համայնք Կապան, Կապան ք., Մ. Ստեփանյան փողոց, 12/35 հասցեում գտնվող 13,3 քմ տարածք: Լոտի մեկնարկային գինը՝ 6300000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 12.07.2024թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 30.12.2024թ.:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն:

Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կաֆյացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«...ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ»

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«ՀՀ 2025 թվականի երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի շրջանակում ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել իրազեկման, խորհրդատվական հանդիպում 18 համայնքների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումը վարել է Երիտասարդության հարցերի վարչության աշխատակից, մրցույթը համակարգող Վերոնիկա Խորասանյանը: Ներկա են եղել 2024 թ. Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը եւ մրցույթի փորձագետներ:

«Այս ձեւաչափով հանդիպում առաջին անգամ ենք անցկացնում «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթով հետաքրքրվող համայնքների ներկայացուցիչների հետ, քանի որ նախկին փորձը ցույց է տվել, որ շատ հաճախ ոչ լիարժեք, մրցույթի նպատակներից չբխող հայտեր ներկայացնելու կամ մրցույթի մասին ոչ ամբողջական պատկերացում կազմելու պատճառով համայնքները դուրս են մնացել մրցակցությունից: Այս հանդիպման նպատակն է աջակցել շահառու համայնքներին՝ ներկայացնելու բովանդակային, իրենց համայնքի երիտասարդության կարիքներից բխող ծրագիր, բացառելու մրցույթի ընթացակարգի վերաբերյալ տարընկալումները, օգտական խորհուրդներ տալ փորձագիտական այցի կազմակերպմանն ընդառաջ»,- ասել է ԿԳՄՍՆ ներկայացուցիչ Վերոնիկա Խորասանյանը:

Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալը ներկայացրել է իրենց փորձը՝ ընդգծելով, որ երիտասարդական ոլորտի համար համայնքի բյուջեում առանձին տող է հատկացված, համայնքային կյանքում ակտիվորեն ներգրավված են երիտասարդներ՝ տարբեր բնագավառներում, երիտասարդական կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են բյուջեի մշակմանը:

«Կարեւոր է ոչ միայն նվաճել «երիտասարդական մայրաքաղաք» տիտղոսը, այլեւ պահպանել այդ նշաձողը եւ հնարավորինս հանրահռչակել համայնքը նաեւ միջազգային հանրության համար: Մենք պատրաստ ենք համագործակցել եւ մեր փորձը փոխանցել յուրաքանչյուր համայնքի, որը կարիքը կունենա»,- ասել է Գրիգոր Դաշտոյանը եւ մյուս համայնքների ներկայացուցիչներին հրավիրել 2024 թ. երիտասարդական մայրաքաղաք Գավառ՝ մասնակցելու առաջիկայում կայանալիք միջոցառումներին:

Նախկին տարիներին մրցույթի շրջանակում որպես փորձագետ հանդես եկած «Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» հասարակական կազմակերպության խորհրդի անդամ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը եւ «GaragErasmus4Yerevan» երիտասարդական հասարակական կազմակերպության նախագահ Գեւորգ Հարությունյանը խորհուրդ են տվել փորձագիտական այցելությունների ժամանակ ճիշտ ներկայացնել համայնքի երիտասարդական ներուժը եւ այն կրթական, սոցիալական միջավայրը, որտեղ գործունեություն են ծավալում երիտասարդները, փորձագետների հետ հանդիպումների ժամանակ ներգրավել բոլոր շահագրգիռ կողմերին, ապահովել ծրագրի ներառականությունը, աշխատել թիմային, քանի որ «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» տիտղոսը կրելը միայն սիմվոլիկ բնույթ չի կրում, այլ պահանջում է ամենօրյա շարունակական աշխատանք:

Վերոնիկա Խորասանյանը ներկաներին սահիկաշարի միջոցով ներկայացրել է մրցույթի կարգը, իրավական հիմքերը, նպատակը, իրականացման ընթացակարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, արդյունքների ամփոփումը: Առանձին կետերով անդրադարձ է եղել նաեւ հայտի փաթեթին, ուշադրության արժանի դետալներին եւ այլն:

Համայնքների ներկայացուցիչներն ուղղել են իրենց հարցերը, որոնք վերաբերել են համայնքի եւ երիտասարդական կազմակերպությունների համագործակցության սահմանափակումներին, համայնքի ֆինանսական աջակցությանը, համահայտատու կազմակերպությունների իրավական ձեւերին, երիտասարդական մայրաքաղաքում իրականացվող ծրագրերի բնույթին եւ այլն:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

«ՕՍԿԵ ԾԻՐԱՆ»

ՈՎ Է ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԺՅՈՒՐԻԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Գագայի «911» տեսահոլովակի հեղինակ Թարսեմ Սինգիը «Ոսկե ծիրան»-ի «Տարածաշրջանային համայնապատկեր» մրցութային ծրագրի ժյուրիի նախագահն է:

21-րդ «Ոսկե ծիրան»-ի «Տարածաշրջանային համայնապատկեր» մրցութային ծրագրի ժյուրիի նախագահն է հնդիկ-ամերիկացի ռեժիսոր Թարսեմ Սինգիը, ով հայ հանդիսատեսին գուցե առավել հայտնի է որպես Լեդի Գագայի փարաջանովյան գեղագիտությամբ ոգեշնչված «911» երգի տեսահոլովակի հեղինակ: Լեդի Գագայից բացի՝ Թարսեմի ռեժիսորական աչքով են տեսողական մարմին ստացել «R.E.M.»-ի «Losing My Religion» երգը, Վանեսա Պարադիի «Be My Baby»-ն, Լու Ռիդի «What is Good»-ը եւ այլն:

2000-ին մեծ էկրան է բարձրացել Թարսեմի կինոդեբյուտը՝ Ջենիֆեր Լոպեսի գլխավոր դերակատարությամբ կուլտային «Բջիջ» գիտաֆանտաստիկ թրիլլերը, որը բազմաթիվ կինոքննադատներ գովել են հոլիվուդյան կինոյի համար անսովոր վառ պատկերային, սիմվոլիկ մտածողության համար:

«Բջիջ»-ից ի վեր Սինգիը հեղինակել է եւս 5 լիամետրաժ ֆիլմ, որոնցից վերջինը՝ «Սիրելի Ջասի» դրաման, համաշխարհային պրեմիերա է ունեցել 2023-ին Տորոնտոյի միջազգային կինոփառատոնում՝ արժանանալով «Platform» մրցանակին, իսկ երեւանյան պրեմիերա կունենա «Ոսկե ծիրան» 2024-ի օրերին:

Փառատոնն այս տարի տեղի կունենա հուլիսի 7-14-ը: Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի եւ այլն) կինոփառատոններից: Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, ովքեր իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին:

Նշենք նաեւ, որ «Ոսկե ծիրան»-ն այս տարի առանձնահատուկ անդրադարձ կկատարի երկու մեծությունների՝ Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյաններին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՕԽ-ԻՆ ԿՈՒՆԵՆԱ ԵՐԿՈՒ ԼՈՂՈՐԴ

Հայաստանի օլիմպիական հավաքականը համալրվել է եւս երկու մարզիկով:

Ինչպես հայտնում է Հայաստանի լողի ֆեդերացիան, Օլիմպիական խաղերի մասնակցության իրավունք են ստացել ամենաբարձր վարկանիշ ունեցող Հայաստանի երկու ներկայացուցիչները՝ Արթուր Բարսեղյանը եւ Վարսենիկ Մանուչարյանը: Նրանք խաղերին կմասնակցեն «սպիտակ քարտ»-ով: Թե՛ Բարսեղյանը, թե՛ Մանուչարյանը մասնակցել են Տոկիոյի ամառային խաղերին եւս:

Հայաստանը 33-րդ ամառային Օլիմպիական խաղերին մինչ այս ուներ 12 մասնակից՝ հրաձիգ Էլմիրա Կարապետյանը, բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը, ըմբիշներ Արթուր Ալեքսանյանը, Մալխաս Ամոյանը,Սլավիկ Գալստյանը, Վազգեն Թեւանյանը, Արսեն Հարությունյանը, մարմնամարզիկ Արթուր Դավթյանը, ծանրորդներ Անդրանիկ Կարապետյանը, Գարիկ Կարապետյանը եւ Վարազդատ Լալայանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԻՄԸ՝ ԱՌԱՋԱՏԱՐ

Հունաստանի Հռոդոս կղզում անցկացվող շախմատի Եվրոպայի մինչեւ 18 տարեկանների թիմային առաջնության չորրորդ տուրում Հայաստանի թիմը մրցեց Իսրայելի առաջին հավաքականի հետ եւ հաղթեց 2,5:1,5 հաշվով:

Հաղթանակներ տարան Էմին Օհանյանն ու Ռոբերտ Փիլիպոսյանը: Ոչ-ոքի խաղաց Էրիկ Գասպարյանը: Պարտություն կրեց Արսեն Դավթյանը:

Հայաստանի թիմը 3,5 միավորով առաջատարն է: Գերմանիան, Իսրայելն ու Լեհաստանը հետ են կեսական միավոր:

Առաջին տուրում Հայաստանի թիմը 3,5:0,5 հաշվով հաղթել էր Իսրայելի (Ռամատ Գան) թիմին: Երկրորդ տուրում 2:2 հաշվով ոչ ոքի էր խաղացել Սլովենիայի թիմի հետ: Երրորդ տուրում 3:1 հաշվով պարտության էր մատնել Թուրքիայի թիմին:

ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԻ

Ֆրանսիայի հավաքականի մարզիչ Դիդյե Դեշամը Եվրո-2024-ի խմբային փուլի երրորդ տուրի՝ Լեհաստանի դեմ խաղից առաջ խոսել է հարձակվող Կիլիան Մբապեի առողջական վիճակի մասին:

«Կիլիանի առողջական վիճակը օր-օրի ավելի է բարելավվում: Այտուցը գրեթե անցել է եւ նա սկսել է հարմարվել պաշտպանիչ դիմակին: Նա շնչառության հետ կապված խնդիրներ չունի, բայց տեսողության հետ կապված խնդիրներ ունի: Որոշ իրավիճակներում դիմակը սահմանափակում է դիտման անկյունը: Դրա պատճառով նա կարող է խաղային որոշ դրվագներից կտրվել», - Դեշամի խոսքերն է փոխանցում L՛ Equipe-ը:

Հիշեցնենք, որ Մբապեն կոտրել էր քիթը Եվրո-2024-ի Ավստրիայի հավաքականի դեմ առաջին տուրի խաղում (1:0): Վնասվածքի պատճառով 25-ամյա հարձակվողը բաց թողեց երկրորդ տուրի՝Նիդեռլանդների դեմ խաղը (0:0):

● *Հունիսի 29-ին՝ժամը 19:00-ին, Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Համլետ» ողբերգությունը: Տոմսերի արժեքը՝3000-8000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ստանալ վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա:

Սամվել Հովհաննիսյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Վիճակախաղերի կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է՝ «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 987-Ն որոշման համաձայն: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով), վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող համապատասխան եզրակացության հիման վրա:

Հայտատուները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 01.07.2004թ. թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 600 000 000 ՀՀ դրամ: Հայտատուն վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005162137 հաշվեհամարին վճարում է 600 000 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ գաղափարները հեղինակային իրավունքի օբյեկտ չեն համարվում:

Ներսես Աթայան (28 տարեկան)

«Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով հստակ սահմանված են այն օբյեկտների ցանկը, որոնք չեն պահպանվում հեղինակային իրավունքով: Սակայն, հեղինակների կողմից հաճախ տրվող հարցերի մեծ մասը վերաբերում են գաղափարների պահպանությանը:

Հարցը այն է, որ եթե գաղափարները պահպանվեին որպես հեղինակային իրավունքի օբյեկտ եւ դրանց տրվեր բացառիկ իրավունք, ապա դա կխանգարեր ստեղծագործական մտքի ազատ զարգացմանը, քանի որ միեւնույն գաղափարի հիման վրա կարող են ստեղծվել տարբեր ստեղծագործություններ որոնք կտարբերվեն մեկը մյուսից իրենց ինքնատիպությամբ:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքի պահպանությունը տարածվում է գրականության, գիտության եւ արվեստի բոլոր ստեղծագործությունների վրա: Ստեղծագործությունները տարբերվում են իրենց արտահայտման, օգտագործման ձեւով, ինչպես նաեւ ինքնուրույնության աստիճանով: Հեղինակային իրավունքի օբյեկտների դասակարգումը բխում է հիմնականում Բեռնի կոնվենցիայից, սակայն ամեն մի երկիր իրավասու է կանոնակարգելու հեղինակային իրավունքի օբյեկտների ցանկը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բասկետբոլի կանանց ազգային հավաքականը Եվրոպայի փոքր երկրների առաջնության ընթացքի մեջ է: Հավաքականի երկրորդ հանդիպումը կանցկացվի այսօր՝ մրցելով Ալբանիայի հետ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ______________

Ազգանուն՝ ______________

Առաքման հասցե՝ ______________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ______________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Ջերմաստիճան (գիշեր / ցերեկ)
Շիրակ	+7 +12 / +25 +29
Կոտայքի լեռներ	+8 +10 / +24 +27
Կոտայքի նախալեռներ	+19 +21 / +30 +33
Գեղարքունիք	+7 +11 / +24 +28
Լոռի	+9 +14 / +25 +28
Տավուշ	+14 +19 / +29 +33
Արագածոտնի լեռներ	+7 +9 / +23 +27
Արագածոտնի նախալեռներ	+16 +20 / +29 +33
Արարատ	+19 +21 / +34 +36
Արմավիր	+18 +20 / +34 +36
Վայոց ձորի լեռներ	+8 +10 / +24 +27
Վայոց ձորի նախալեռներ	+17 +19 / +33 +35
Սյունիքի հովիտներ	+18 +21 / +31 +34
Սյունիքի նախալեռներ	+12 +16 / +25 +28
ԼՂՀ	+12 +15 / +24 +26
Երեւան	+22 +24 / +32 +34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.6.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*